ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<< 02 >> սեպտեմբերի 2013թ. N 76 - Ա

ք. Արմավիր

## ՎԱՐԱԶԴԱՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 166-րդ հոդվածով, 167-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի սեպտեմբերի 2-ի զեկուցագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի 2013 թվականի սեպտեմբերի 2-ի համաձայնությունը.

կ ա ր գ ա դ ր ո ւ մ եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին 2013 թվականի սեպտեմբերի 2-ից հետ կանչել 2013 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդից և ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործված 4 աշխատանքային օրերը տրամադրել 2013 թվականի ընթացքում:
2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ